ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՄԵՐ ՔԱՂԱՔԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

---17/12---2025թ.

N ---56/25---

Գյումրի համայնքի ղեկավարին
փոխարինող պարոն

Ա.Առաքելյանի

Պարոն Առաքելյան,

Մեր խմբակցությունը թիվ 08/12 N55/25 համարով Ձեզ գրություն էր ուղարկել, որով խնդրել էինք մեր կողմից առաջարկված 5 մանկապարտեզներում մասնակի նորոգման հարցը ներառել ավագանու առաջիկա հերթական նիստին: Բայց, նախ շատ ուշ ենք ստացել պատասխան /17.12.2025թ/ և բացի այդ, պատասխանը մեզ չի բավարարել: Մենք կրկնում ենք մեր պահանջը և առաջարկում՝ ինչպես բանավոր պայմանավորվեցինք, առաջիկայում /մինչև դեկտեմբերի 26–ը/ հրավիրել արտահերթ նիստ և հարցը ներառել արտահերթ նիստի օրակարգում:

Հիշեցնում ենք նախորդ գրության բովանդակությունը, որ «Գյումրու օր» տոնախմբության համար նախատեսված ծախսը կազմում էր 15 մլն դրամ, ինչը հայտնի պատճառով տնտեսեցինք և նույն պահին մեր խմբակցության կողմից առաջարկ եղավ, որ այդ գումարը ուղղորդենք մանկապարտեզների բարելավմանը: Քանի որ նախորդ արտահերթ նիստին հայտարարեցիք, որ այդ գումարը պլանավորվել եք ամանորյա միջոցառումներն իրականացնելու, հավելենք, որ մեկը մյուսի հետ կապ չունի և ամենամյա բյուջեի պլանավորման մեջ ֆինանսիստները պլանավորել են և՛ «Գյումրու օր» տոնախմբության, և՛ ամանորյա տոնական միջոցառումների ֆինանսական ծախսերը:

Նաև հիշեցնում ենք, որ հոկտեմբեր ամսին գրությամբ հանդես եկանք, որ այդ գումարը տրամադրեինք Երկաթգծի բավանավանում գործող «Էյլիթիա» մանկապարտեզի նորոգմանը, սակայն մեր գրությանը

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 17. 12 20 25 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 19459

համապատասխան բաժինը պատասխանել էր, որ տվյալ մանկապարտեզն ունի վթարայնության հետ խնդիր:

Մենք պնդում ենք մեր հրապարակային խոսքը և առաջարկում ենք խնայողությունների հաշվին՝ ըստ խնդրի անհրաժեշտության ու համամասնորեն համայնքային բյուջեից գումար տրամադրել՝ «Արձագանք» մանկապարտեզի 2 սանհանգույցների նորոգման, «Անի» մանկապարտեզի ջրագծերի նորոգման, «Հենզել և Գրետել» մանկապարտեզի տանիքի մասնակի նորոգման, «Կարմիր գլխարկ» մանկապարտեզի տանիքի մասնակի նորոգման, «Էյլիթիա» մանկապարտեզի ցանկապատի նորոգման նպատակով:

Հավելենք, որ վերընշված մանկապարտեզների տնօրենները տեղեկացված են, որ մինչև վաղը՝ դեկտմբերի 18–ը համայնքապետարան կներկայացնեն ծավալաթերթեր, ըստ որի կկազմվի հարցի նախագիծ, որով էլ հարցը կներառվի առաջիկա հերթական նիստի օրակարգում:

«Մեր քաղաքը» խմբակցության ղեկավար՝ Լիզա Գասպարյան